

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

53րդ ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 45

8 ՆՈՅԵՄԲԵՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիտական աշխարհի վերջին նորութիւնը. Ելեկտրաօւրժ երկաթուղին (Նամակ Պերլինգեն)
ՀՐԱՆԴ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ :—Թովմաս Թեղեանին սուգը (Բանաստեղծութիւն) Հ. ԳԱԻԹ ՎԱՐԴ.
ՆԱԶԱՐԷԹԵԱՆ :— Բաղդին Բահանոյք (Նորավայ) ՓԱՅԼԱԿ :— Խոյնունք (Բանաստեղ-
ծութիւն) ՏՕՄԻՆՕ :— Վառարանիս անկիւնէն. ՄԵՆԱՍԷՐ :— Լիլիէն Մօրիս (Վեպ) ՀԷՆՐԻԲ
ՍԷՆՔԻԷՎԻԶ. Թարգմ. Զիշթէ-ՍԱՐԱՅ :— Խմբագրական Նօթեր :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթերի սարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար Բառսուն դր. 5
Եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի : Արասաահման՝ 12 Ժրանք կամ
5 Բուլլի : Թղթասարական ծախքը Խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ
հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու : Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան : Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առա-
կութիւնները նկատուողութեան չեն առնուիր :

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշնչի պայ-
մաններով :

Զեմ-Գէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه غلطه (ماسيس) غزتهسى ادارهسى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կա. ապագրութեան ֆոնդային ներքեւ, երաշխաւորեալ դրամագրութիւն ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոյժգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարչէն, Լուվրի վաճառատուները, Բիկմայիոնը, Բրէնթանի, Պէլ-Սառաինիէրի, Օթէլլ ար Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսպորտի, Հալի-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր կազմական կանոնադրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances générales Maritimes, ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հապտէ.—Պօլիս, Մահմուտ փաշա, Պէտիւք Երլաւզ խան, Թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անբիւր վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, Թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ ֆւասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ ֆւասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութեանը Ձերժ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՌԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեւմաք գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի ՏՅՈՐԷՆՈՒՔԻՆ

Պոլիս, Սուլթան Համալ, Բասաժ Քաթրնը Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԽԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեպոյ անտան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Չքրանեան աբաւրման

Պալապիւան ամէն օր ակոյայի ամէն տեսակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Դիչերուան ո եւ է ժամուն կարելի է դիմել: Պալապիւան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակոյաները: Ցորեկները ակոյայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղփայտեալն օրի

Ա.ՊԱՌԻԿ Վ.Ա.ՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արժաթեայ դաւաղաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Վանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ զեղչներէն՝ 100ին 15 զեղչով:

ԺԻՒՐԱԿԱՆ ԱՌՏԻ ԳԵՄ ՆԱԽԱԶԳՈՒՂՈՒԹԻՈՒՆ

Ծիրակաւն արտի դէմ նախադրուածեան միայն ծամբայ մը կայ, այն է մարմինը միշտ կենսական զօրութեամբ պահել որոնք դրութեան կենսական զօրութիւնն, առողջութիւնն և դիմացողան ոյժ տալով կրնայ ըլլալ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ ամենալաւ “ուտելիք—դեղ” է, որ շուտմը առողջութիւնը կը վերականգնէ և երակներու մէջ նոր հարուստ արիւն կը տարածէ:

Եթէ կազմութիւնը կատարեալ առողջութեան մէջ չէ և բարակցաւի առաջին նշանները երեան կ'ըլլեն. ինչպէս տեղական գունատութիւն, թէթեւ սակայն թելաթար հազ, դիշերները սաստկացող բարեխառնութիւն և արտօթակի կորուստ ևն. ժամանակ վատնելու չէ, մէկէն Ըսգօթի Բաղադրութիւնն առնելու է. միակ դեղն է որ կրնայ մարդս առողջութեան և զօրութեան վերականգնել և այս եղբլութիւնը գործնականապէս կը տեսնուի վասնզի հազարաւորներ տեսած են և կը տեսնեն:

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԴՐՈՒԹԻՈՒՆ

կատարելապէս անուշահամ է: Եւ արտօթակի կենդանացունէ, և մարտողութիւնը կ'աճապարէ: Հիւանդութեան սեռը կը մեղքնէ և շուտմը մարմինը կը զաւալէ: Ըսգօթի Բաղադրութիւնը ընդմիշտ այս տեսնուած նշանով վարդադոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Շիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

21

Իսկը բեղմնութիւնը և բեղմնաւորութիւնը ինչպէս:

ԴԱՇՆԱԿԱՀԱՐ երիտասարդ մը, որ եւրոպայի մէջ ուսումնասիրութիւններ կատարած է, պատրաստակամութիւն ունի այցելութեամբ դասեր տալ դպրոցներու եւ տղաներու մէջ մասնայատուկ մէթօտի մը համաձայն որ աղէկ եւ արագ կերպով կը սորվեցնէ դաշնակահարութիւնը: Պէտք ունեցողները կրնան դիմել Մասիսի խմբագրութեան:

“AU TALON D'OR” ՕԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՉԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱՅՆԱՍԵԱՆ

ՀԱՅ ԿՕՏԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉՍՓՈՒ ՎՐԱՅ

Կալաթա, Վոյվոսա փողոց, թիւ 103

Ճաշակաւոր ու վերջին, նորաձեւութեան համաձայն կոշիկներու յանձնարարութեան համար,—մանաւանդ չափու վրայ շինուելիք,—կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կըսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Եւ Յ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճաւայէն եւ Սէլանէն ուղղակի բերել տուած բարմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահէճ Գափու, ձէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաձեւեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն զնելու պէտք ունեցողները կրնան դիմել Կառնիսի գլխաւոր լրագրավաճառ Միսաք աղային:

ՄԱՍԻՍ

53րդ ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 45

8 ՆՈՅԵՄԲԵՐ 1903

ԳԻՏԱԿԱՆ ԱԾԽԱՐՀԻՆ ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

ԵԼԵԿՏՐԱՇԱՐԺ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

ՊԵՐԼԻՆ, 8 ՆՈՅԵՄԲԵՐ 1903

Անվիճելի իրողութիւն մըն է այսօր, որ ժամանակակից արհեստագործութեան մէջ ելեկտրականութիւնը առաջին տեղը կը գըրաւէ իր մատուցած անգնահատելի, բազմաթիւ ծառայութիւններովը: Ինչ որ ասկէ տասնեակ տարիներ առաջ բանդագուշանք մը պիտի համարուէր, այսօր ելեկտրականութեան շնորհիւ կատարեալ իրողութիւն մը դառնալով, զարմանք միայն կ'աղղէ՝ քաղաքակրթութեան ամբողջին: Ելեկտրական արհեստագործութիւնը տակաւին նորութիւն մըն է ինքնին և կարելի է վստահաբար ըսել, որ ան իր նախնական քայլերն է որ կ'առնէ դեռ գործնական արհեստներու աշխարհին մէջ: Եթէ բաղդատենք իր զարգացման համեմատաբար կարճ ժամանակամիջոցը՝ իր մինչև հիմայ ցոյց տուած արդիւնքներուն հետ, այն ատեն իրաւունք կ'ունենանք սպասելու, որ բնութեան այս առեղծուածային, զարմանահրաշ զօրութիւնը մօտաւոր ապագայի մը մէջ անսպասելի յայտնութիւններ ընէ ու իր բերելիք նորութիւններով հիմնովին փոփոխէ արհեստական ու գիտական կարգ ու սարքերը:

Այս խորհրդածութիւնները կունենանք ականայ, նկատի առնելով ելեկտրական արհեստագործութեան նորագոյն մէկ քայլը, որ քաղաքակրթութեան բոլոր երկիրներու մէջ իրաւացի զարմացում մը առաջ բերաւ: Այդ նորութիւնը, որ Պոլսահայ թերթերուն մէջ

ալ իր արձագանգը դատու, նախասահմանուած է կարծես մարդուն մինչև հիմայ ունեցած երթեւեկութեան միջոցները մէջտեղէն վերցընել և ինքը գալով հաստատուելով անոնց տեղը, անհամեմատ առաւելութիւններով օժտել աշխարհը: Խօսքս ելեկտրական այն երկաթուղիին վրայ է, որ ասկէ մէկ քանի շաբաթներ առաջ հոս փորձուելով, նմանը չի տեսնուած սոսկալի արագութիւն մը ունեցաւ ժամը 210 քիլօմետր կարել անցնելով: Այս արագութեան վրայ գաղափար մը ստանալու և անոր նշանակութիւնը պարզելու համար՝ պէտք է զայն բաղդատել, առօրեայ կեանքէն մեզ ծանօթ ուրիշ արագութիւններու հետ, այսպէսով, ո՛չ-մասնաւէտ մը ամէնչէն աւելի դիւրութեամբ կրնայ ըմբռնել, թէ ի՞նչ է ժամը 210 քիլօմետրի արագութիւնը ըսուածը, զոր անյիշատակ ժամանակներէ ի վեր երկրագունդիս վրայ առաջին անգամն ըլլալով կը յաջողի մարդս ձեռք բերել:

* *

Նախ և առաջ պէտք է պարզօրէն ըմբռնել, թէ շարժումը տեսականօրէն այնպիսի երեւոյթ մըն է, որուն չէ կարելի սահմաններ դնել: Մենք կրնանք անհունապէս արագ շարժումի մը մասին ա'յնքան դիւրութեամբ խօսիլ՝ որքան անհունապէս դանդաղ շարժումի մը մասին: Սակայն մինչդեռ անհուն արագութիւն մը վերջապէս մեր երեւակայութեան անըմբռնելի կը դառնայ իր անսահմանութեան հետեւանքով, նոյնը չըլ-

լար դանդաղութեան մասին, որովհետեւ անհուն դանդաղութիւն մը իր վերջնական որոշ սահմանագիծը ունի ուր ստիպուած է գալ յանգիլ վերջապէս:—այդ սահմանագիծը դադարն է: Մարմնոյ մը համար, որ չի շարժիր, որ իր տեղն ու դիրքը չի փոխեր, կըրնանք առանց այլեւայլի ըսել, թէ ան անհունապէս դանդաղ շարժման մը ենթակայ է: (Բնականաբար դադար բացատրութիւնը յարաբերապէս միայն նշանակութիւն ունի, ինչու որ երկրագունդիս վրայ և ամբողջ տիեզերքին մէջ չիկայ մասնիկ մը, որ շարժման ենթակայ չըլլայ: Նոյնիսկ եթէ մէկը բաղմոցի մը վրայ երկնաշուքի եզրակայնէ, թէ ինքը դադար կառնէ, մի՛ հաւատաք, քանի որ ան, նախ, որչափ ատեն որ կ'ապրի, իր արեան և միլաններու շարժումներուն ենթակայ է և ապա հողագունդին վրայ գըտնուելով ստիպուած է մէկ վայրկեանի մէջ քանի մը հարիւր մեղր արագութեամբ երկրին առանցքին շուրջը և միեւնոյն ժամանակ մօտաւորապէս 4 մղոն արագութեամբ արեւին շուրջը դառնալու):

Մեքենագիտութիւնը արագութիւն իմաստը կը պարզաբանէ ըսելով որ անիկայ ուրիշ բան չէ, եթէ ոչ յարաբերութիւնը կըտրուած ճամբայի մը և առ այդ գործածուած ժամանակին: Որչափ շատ ըլլայ որոշ ժամանակի—միութեան մը մէջ անցուած ճանապարհը, ա՛յնքան մեծ կ'ըլլայ նաև արագութիւնը և կամ ո՛րքան աւելի ժամանակ գործածենք որոշ ճանապարհ մը անցնելու համար՝ ա՛յնքան աւելի փոքր կ'ըլլայ արագութիւնը: Այս վերջին պարագային, կը մօտենանք հետզհետէ արագութեան ստորին աստիճաններուն, այնպէս որ եթէ անհունապէս երկար ժամանակ մը կը գործածենք, որպէսզի բնաւին ճամբայ մը անցնինք, ըսել է երբեք չենք յառաջանար, որով ուրեմն արագութիւն մը չունինք: Ասոր համար է որ անա զիտական լեզուով, մարմնոյ մը համար, որ չի շարժիր ու դադարի դրութեան մէջ է, կ'ըսեն թէ անոր արագութիւնը զերօի հաւասար է:—Գործնական կեանքին մէջ յաճախ կը լսենք «կրեայի մը արագութիւն» բացատ-

րութիւնը, ատով կ'ուզուի հեգնօրէն նշանակել, թէ խնդրի առարկայ եղող արագութիւնը խղճալիօրէն պզտիկ է, որովհետեւ մեզ համար կրեայի մը յառաջնադասումը արագութեան ամէնէն ստորին աստիճաններուն վրայ կը գտնուի: Բայց կրեայի մը կամ խստնջի մը գնացքին արագութիւնները (այս վերջինը ժա՛ր մօտաւորապէս հինգ մեղր ճանապարհ մը կրնայ անցնիլ) դեռ բաւական մեծ են, եթէ բաղդատենք զանոնք ուրիշ շատ աւելի նուազ արագութիւններու հետ: Օրինակի համար աւեննք մեր մասներու եղունգներուն ամեցումը. անոնք դանդաղ, սակայն յարատեւ յառաջդիմութիւն մը ունին և մէկ սանդղիմեղր մեծնալու համար ամիսէ մը աւելի ժամանակի կը կարօտին, իսկ եղունգ մը մէկ մեղր երկնցնելու համար հարկ պիտի ըլլար թերեւս տասը տարուան երկար համբերութիւն մը: Այս արագութիւնն ալ սակայն համեմատաբար շատ մեծ է, եթէ նկատողութեան առնենք ուրիշ շատ աւելի պղտիկ մը: Ճառագայթարձակ մարմինները, որոնք վերջերս յաճախ մանրազնին ուսումնասիրութիւններու ենթարկուած են, պէտք է անպատճառ, ժամանակի ընթացքին, իրենց ծանրութենէն բան մը կորսնցնեն, քանի որ իրենց արտադրած լոյսը իր ուրիշ բան չընդունուիր, եթէ ոչ անհունապէս փոքր լուսաւոր հիւլէներու հոսանք մը, որ դատուելով բուն զանգուածէն, պարապութեան մէջ կը ցրուի շարունակ: Այդ բաժնուող հեռացող հիւլէները, սակայն, այնքան չնչին կերպով ճառագայթարձակ մարմինն ծանրութիւնը կը նուազեցնեն, որ ան, եթէ մէկ քառակուսի սանդղիմեղր ծաւալով ճառագայթող մակերես մը ունի, մօտ տասը միլիաւո տարիններու ժամանակի մէջ հազիւ կրամ մը պիտի կրնայ թեթեւալ: Այսպէսով կը տեսնենք ուրեմն, թէ ճառագայթարձակ մարմինը գրեթէ աներեւակայելի կերպով յամրօրէն նուազելով, իր մակերեւոյթը յարատեւ շարժման մը մէջ կը պահէ որ թէև խիստ փոքր, սակայն որոշ արագութիւն մը ունի ու եթէ եղունգի մը ամման արագութիւնը իրեն հետ համեմատենք՝ պիտի կրնանք վստահաբար

ըսել որ եղունգները կայծակնանման արագութեամբ մըն է որ կերկննան :

Արդէն վերջին օրինակին մէջ յիշուած շարժումութիւնը մեզ համար լոկ վերացական գաղափար մըն է, որովհետեւ անկարելի է մեզ՝ մեր զգայարաններուն միջոցաւ վերահասու ըլլալ անոր. այդ պատճառով անապիտի դրդութիւնք թերեւս խորհելու, թէ ատով արդէն շատ մօտեցած ենք զէրօ-արագութեան կամ դադարի սահմանագիծին : Բայց այդ այդպէս ըլլալէ դու շատ հեռու է, քանի որ կրնանք մենք մաթեմատիքական գործողութիւններու օգնութեամբ մեր վերը ցոյց տուած արագութիւնը միլիոն անգամներով պզտիկցնել դեռ և միեւնոյն ժամանակ տակաւին անհունապէս հեռու գտնուիլ հանգստի, անշարժութեան կայանէն :

* *

Այսչափ՝ արագութեան այս բացասական կողմին նկատմամբ. հիմայ տեսնենք թէ ատոր հակառակ ուղղութեամբ ի՞նչ համեմատութիւններ կան : Նախ սկսինք մարդուն արագագնացութեամբ : Հետիոտն ճամբորդ մը, նպաստաւոր պարագաներու մէջ, կրնայ իւրաքանչիւր վայրկեանի մէջ մէկուկէս մեդր տեղ երթալ, ըսել է ժամուան մը մէջ 5, 1/4 քիլոմեդր, ինչ որ ինքնին շատ չնչին հեռաւորութիւն մըն է : Արդէն ի՞նչպէս կարելի է աւելին սպասել խեղճուկ մարդ արարածէ մը որ միմիայն իր ֆիզիքական տկար անդամներուն ապակնած է ինքզինքը մէկ տեղէն միւսը փոխադրելու համար :—Արագութեան արդիւնքը զգալի կերպով կը բարելաւի, երբ արդէն ձի մը օգնութեան առնենք մեզ : Քառարչաւ ձի մը, օրինակի համար, վայրկեանը 4, 5 մեդր տեղ կրնայ անցնիլ, ուրեմն ժամը 16, 3 քիլոմեդր. իսկ հեծանիւով կարելի է, խնամուած ճանապարհներու վրայ դիւրութեամբ ժամը մինչեւ 30 քիլոմեդր կրտրել :—Սբորդական մրցումներու մէջ հեծանիւով(*) ձեռք բերուած արագութիւնները սակայն աւելի մեծ եղած են և կարելի է իբրեւ

այս միջոցով ստացուած բարձրագոյն արագութիւնը ժամը 80 քիլոմեդր, ուրեմն մէկ վայրկեանի մէջ 22, 2 մեդր, ընդունիլ :—Ասիկայ արդէն բաւական պատկառելի արագութիւն մըն է մարդուն համար, սակայն ան ասով իսկ չպիտի կրնար աղաւնի մը, արծիւ մը կամ ծիծեռնակի մը հետ մրցման մասնել :

Այդ պզտիկ, աննշան ծիծեռնակները, տարող էակներու մէջ անկասկած ամէնէն դիւրաշարժները, ամէնէն արագութիւններն են. իրենց արագութիւնը վայրկեանը 45 մեդրի կը հասնի, որ ժամը 162 քիլոմեդր հեռաւորութեան մը կը համապատասխանէ : ժամը 162 քիլոմեդր! ասիկայ կատակ չէ.— գիտցէք որ, եթէ այդ թռչնիկը շուտով յոգնելու դատապարտուած չըլլար, 2—3 ժամէն պիտի կրնար կտրել անցնիլ ճանապարհ մը դոր մարդիկ կառքերու և ձիերու օգնութեամբ հազիւ 4 օրէն կը յաջողին անցնիլ : Իրաւ է որ օթոմոպիլներու միջոցաւ մինչեւ 150 քիլոմեդր արագել կարելի եղած էր (վերջին Բարիդ—Մատրիաի մրցման ատեն, որուն ա՛յնքան մարդկային կեանքեր զոհուեցան և զոր կաւալարութիւնը ստիպուեցաւ արգիլել՝ հանրային ապահովութիւնը աչքի առջեւ ունենալով) և ատով աղաւնիին և արծիւին արագութիւններէն անցնիլ, սակայն ծիծեռնակը իր առաջնութիւնը կը պահէր դեռ : Երկու իւրաւունք ունէին ուրեմն այն բանաստեղծները, որոնք, իրենց հեռաւոր սիրելիներուն շուտով բարեւիկ մը զրկելու համար, խռոչ նիկներուն պէս արագաւազ սուրհանդակներու կ'ապաւինէին բնադրաբար :—Ինչո՞ք թռչնիկները, իրենք ալ վերջապէս աշխարհիս ունայնութեան դառն բաժակէն պիտի ըմպէին. ելեկտրական երկաթուղին պիտի գար վրդովել իրենց հանգիստը և կապուել զիրենք արդարացի հպարտութենէ մը, ժամուան մէջ 210 քիլոմեդր արագութեամբ սուրալով անցնելով իրենց քովիկէն...

Թերեւս ուրիշ անգամ մը առիթը ունենամ խօսելու, թէ ի՞նչպէս ելեկտրականութեամբ կարելի եղաւ այս ապշեցուցիչ ար-

(*) Այս նպատակով գործածուած հեծանիւները շարժիչ մեքենաներ ունին :

դիւնքը ձեռք բերել, թէ փորձերը ինչպէս կատարուեցան և թէ ասով ինչ նորանոր երևուոյթներ ու յայտնութիւններ պարզուեցան արհեստագիտութեան:—Առ այժմ գոհանանք համառօտակի յիշելով գերմանական արհեստագործութեան այս ա՛յնքան պատուաբեր ու փառաւոր յաղթանակին առաջ բերելիք հետեւանքները և տեսնենք, թէ արդեօք դեռ տիրանալիք ինչպի՛սի արադութեան — իտէալ մը կը մնայ մարգոսն, հեռաւոր ապագայի մը ծոցին մէջ պահուած:

* *

Բաղաքակրթութեամբ բոլոր երկրամասերուն մէջ այսօր չի կայ երկաթուղիներու ժամանակացոյց մը, որ շոգեշարժ ձեւընթացի մը համար ժամը 80—90 քիլօմետրէն աւելի արագութիւն մը չշանակէ: Այս արագութիւնը, համեմատելով այն հեռաւոր ճամբորդութիւններուն հետ, զորս մարդիկ ստիպուած են յաճախ կատարել, դեռ շատ չնչին բան մըն է: Երբեմն օրեր ու շաբաթներ կը տեւեն, մինչև որ մարդ իր նպատակակէտին կը հասնի, չռալլօրէն վատնելով իր ամենաթանկագին ժամանակը: Իրաւ է որ բան մը չի կրնոր փոխանակել այն անթիւ առաւելութիւնները, զորս անձնական տեսակցութիւնները կ'ընծայեն գիտութիւններու և անհատական կամ հանրային գործերու: Անձնապէս զիրար ճանչնալու, դէմ-յանդիման խօսակցելու և անձնաւորութիւններու իրարու վրայ թողուցած փոխադարձ նպաստաւոր տպւորութիւններու գեղեցիկ արդիւնքները, նախկիններու, հեռագիրներու և հեռախօսներու միջոցաւ կա՛մ բոլորովին չեն կրնար ձեռք բերուիլ և կա՛մ շատ տկար կերպով միայն:—

Մարդը ստիպուած է ուրեմն ճամբորդելու և անշուշտ ճամբորդութիւնները շատ աւելի բազմաթիւ և ստէպ պիտի ըլլային, եթէ ահալին ժամանակի կորուստ մը կապուած չըլլար ամէն ասին անոնց հետ: Աւտոսիկ ասիէ է, յաճախ և շուտափոյթ կարողանալ ճամբորդելու պահանջը, որուն կողայ գոհացում տալ ելեկտրականութիւնը, իր ետին թողնելով ձին, հեծանիւը, օթօմօսիլը և շոգեկառքը:—Իրաւ է որ շոգեկառքով և օթօմօսիլով, ինչպէս վերը յիշեցի, ժամը 150

քիլօմետր արագութեան մը հասնիլ փորձուած է, սակայն այդ փորձերը բոլորովին զուրկ եղած են առ այժմ գործնականութենէ:

Ձուրերու վրայ մինչև հիմայ անկարելի դարձած է մեծ արագութիւններու հասնիլ: Ամենակատարելագործուած պատերազմական թղթատար նաւերը և թորփիլահալածները, որոնք, իրենց կարելի եղածին չափ պղտիկ ու նեղ շինուածքներուն մէջ, քանի մը հաշար ձիւռ ոյժով մեքենաներ կը սղահեն, հաշիւ կրնան 60—65 քիլօմետր սեղ անցնիլ ժամուան մը մէջ:—Յամաքի վրայ սակայն աւելի գեղեցիկ արդիւնքներ իւրացնել յաջողած է արհեստագործութիւնը: Գերմանիոյ ամէնէն արագ ձեւընթացը, որ Պէրլին-Համպուրկ գիծին վրայ կ'երթեւեկէ, ժամը 83 քիլօմետր կրնայ ա՛ցնիլ և $3\frac{1}{2}$ ժամ կը գործածէ մայրաքաղաքէն մինչև կայսրութեան վաճառականական ամէնէն զլխաւոր նաւահանգիստը հասնելու համար:—Արեւելեան ձեւընթացը, որուն միջին արագութիւնը թերեւս 70 քիլօմետր ըլլայ, Պոլսէն մինչև Բարիզ կատարելիք ճամբորդութեան մը համար 64 ուկիս ժամուան կարօտ է:—Երևակայեցէք որ ելեկտրական երկաթուղին, իր գրեթէ 3 անգամ աւելի արագութեամբ, պիտի կրնայ այդ հեռաւորութիւնը մօտ 22 ժամէն կտրել անցնիլ: Հիանալի հեռանկար մը չէ՞ ասիկայ:

Բայց չի կարծենք թէ ասով ա՛լ վերջնական խօսքը ըսուած է արագութիւններու մասին: Անյաղ մարդկութիւնը անշուշտ օրին մէկը քանի մը հարիւր քիլօմետր ալ աւելի արագութեամբ ճամբորդելու փափաքը պիտի ունենայ և ո՛վ գիտէ. թէ արդեօք արհեստագիտութիւնը պիտի յաջողի՞ նորանոր միջոցներով այդ փափաքին ալ գոհացում տալ:—Այս հարցին չէ՛ք կրնար մենք, մեր ունեցած այսօրուան գիտական պաշարին օգնութեամբ դիւրու և գոհացուցիչ կերպով պատասխանիլ միայն կրնանք ենթադրել որ անհաւանական չէ այդ բանը, քանի որ մեզ ծանօթ է, թէ երկրագունդիս վրայ կան արդէն այնպիսի մարմիններ, որոնք նմանօրինակ արագութիւններով կը շարժին:—Օրինակի համար,

նորագոյն արագահարուած թնդանօթներու գնդակները, որոնք 1000 մեդրի վայրկեանա կան արագութիւն մը ունին: Բնական է որ երկրային մարմիններու համար գոյութիւն ունի արագութեան որոշ սահման մը, ուրիշ անդին անցնել անկարելի է այլեւս, որովհետեւ ո՛րքան մարմնի մը արագութիւնը մեծ- նայ, նո՛յնքան և աւելի կը չատնայ օդին դի- մադրութիւնը և մեծագոյն արագութիւննե- րու դէմ օդին դիմադրող ոյժը ա՛յնքան ան- յաղթելի կը դառնայ, որ մարմինը կը ստիպ- ուի այլեւս փչուելով տեղի տալ:—Տիեզեր- քին մէջ կը գտնուին սակայն շատ աւելի մեծ արագութիւններ, որոնք եղերին—որով լեցուած կ'ընդունինք անհուն պարապութիւնը —աւելի նուազ դիմադրողական ոյժին կը վերագրուին:—Մեր երկրագունդը, օրինակի համար, 30 քիլօմեդրի վայրկեանական արագու- թիւն մը ունի. կան ուրիշ երկնային մար- միններ, որոնք աւելի քան 100 քիլօմեդր Վայրկեանական արագութեամբ կը պտտան տիեզերքին մէջ: Սակայն վերջապէս եղերն ալ, օդին նման, պատուար մը քաշելու է արագասոյր մարմիններու հանդէպ. զսպելով անոնց չափազանց աշխոյժը: Այս սահմանը կ'ընդունուի թէ օդին որոշած սահմանէն դեռ շատ աւելի հեռունները կը գտնուի և կրնայ մինչև 300,000 քիլօմեդրի վայրկեանական արագութեան մը համապատասխանել: Այսչափ խօշական արագութեամբ սուրացող մարմինի մը եղերին դիմադրող ոյժին մէջ տեղի ու- ննալիք բաղխումը այնքան ուժեղ ու սոս- կալի կ'ենթադրուի որ կարելի կ'ըլլայ եղ- րակացնել թէ յառաջխաղացում մը ա՛լ բո- լորովին անկարելի դառնալով՝ մարմինը ըս- տիպուելու է աաքութեան և լոյսի երեւոյթ- ներուն տակ անէանալ:

Դադար և 300,000 քիլօմեդր վայրկեանա- կան արագութիւն. ահա՛ այն սահմանները զորս կարելի կ'ըլլայ տեսականօրէն դնել ա- րագութիւններու համար: Ու եթէ հիմայ այդ երկու ծայրերու մէջ քով քովի դնենք խեղ- ճուկ խխուռջի մը և ելեկտրական նոր երկա- թուղիին վայրկեանական արագութիւնները, 0,0015 և 58 մեդր, որոշապէս պիտի տես- նենք թէ համեմատաբար դեռ խիստ մօտիկ կը գտնուինք իրարու և շատ այնչափ հոգա- րանալու պատճառ մը չունինք խկապէս...

ՀՐԱՆԴ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ
ՃԱՐՏԱՐԱԳԷՏ

ՍՈՒԳ^(*)

—*—

ԱՌ ԹՈՒՄԱՍ ԹԷՐԶԵԱՆ

Ա.

Տեսայ երբեմն որ կ'անցնեք Սղուռ մանկիկ մ'ոսկեհեր Բերայի մեծ փողոցէն, Վանառասան մ'առջեւէն: Հօրք թեւէն եր կախուած, Աչքով՝ հոգով բզմայած. Բայց բզմայումն աւելի ինքն եր աչաց եւ սրբի: Երես, նայուածք ու գրուիս Ամբողջ էին լուսաբոլս. Եւ գոհարներ գոյնբզոյց Կարծես ամեն դին զրուց կը պատէին, եւ փայլ նոր կը սրփռէին չորս բոլոր: Թե գարուն եր, չեմ յիշեր, Բայց ամեն կողմ կ'երեւեր Իբրեւ պարեգ գունովք ի Յոյմունքն ունեւ մի ծաղկի: Իբր հոգեկիր մի փունջ վարդ Մանկիկն ունեւ ամեն զարդ. Նա՛ երեւոյթ անսովոր Ունեւ վրան բիւր շնորհ:

Բ.

Տեսայ պատկեր մի սիրուն, Պատանեկիկ մ'եռանդուն Հեծելանուի վրայ նստած, Զիաւորի պէս հագուած, Աչքերն ուղղած կ'երեւեր Հեռուն անհուն ի բեւեռ, Կը ծրփային գեղեցիկ

Ծ. Խ — Հ. Դաւիթ Վրդ. Նաղարէթեան, ալեւոր և ներհուն Մխիթարեանը, վաղեմի բարեկամ Թովմաս Թէրզեանի, այս զգայուն քերթուածը ուղղած ըլլալով վշտահար դը- րադէս — բանաստեղծին՝ վաղամեռիկ Արմանի մահուան առթիւ, փափաղեցանք հրատա- րակել զայն՝ Մասիսի մէջ, ասով սիրտնք մը ընծայած ըլլալու համար՝ մեր կողմէ ալ՝ Թէրզեան էջիւն:

Գրլխոյն ոսկի խոպոպիք.
Դեմք՝ հայելի իւր անձին՝
Կը շողոզար զուարթագին:
Աւխոյժ խորհուրդք բարձր անթիւ
Կը վառէին զսիրսն ազնիւ.
Փափագք ըստոյ գեղեցկին
Տիրած էին իւր մըսքին,
Ճըւմարտին գիւսն ու բարւոյն
Մի միակ կէս իւր սիրոյն:
Հոգւովն առած էր թելեր
Կը բարձրանար վեր ի վեր,
Հանքն էր կըսել հապնեպով
Ուսմանց ամեն լեռն ու ծով:
Կը սըլանար փաշայոյս
Բոլոր անձամբ դէպ ի յոյս:
Ըզգօն ծերու մը ձայնէն
Քաջալերուած հեռուէն,
Իղձն էր անոր հասնիլ շուտ,
Երբ դեռ արեւն էր անմուտ.
Ըլլալ իւր հօրք նըման
Ազնըւափալլ գիտուն սան.
Եւ արժանի մեծ սիրոյն
Այն հաննարեղ ծերունւոյն:

Աչքս հալեցուց այս պատկեր.
Կարծես երկնից տեղիք մ'էր.
Ուրախութեան հետ զուգում
Վախ պատեց սիրս ու կասկած,
Թէ պատանւոյն մի՞ զուցէ
Մօտիկ ըլլալ եղբայրէ,
Ընկերովով յովկիան
Լուսաւորի մի նըման:

Գ.

Տեսայ, տանար մի պայծառ,
Մոմեղիճօք յուսալառ,
Ուր բեմ մը կար պերճաւոր,
Ու կ'հոսէին արտասուք:
Կը պատէին բեմեղք հոխ,
Կերպասք՝ շրջաւոր փոխն ի փոխ
Բեմին բոլորն. եւ ծաղկունք
Կը բուրէին անուշուք:
Դոյնագոյն փունջք եւ պըսակք,
Սիրոյ սքեցից յիշատակք,
Կը ծածկէին բարձր յերկրէ
Արծաթապատ քաւիքէ

Զոքնաղ արկղիկ մ'աննըման,
Շնորհաց զանաւոր պահարան:
Խընկոց ամպեր յուսազարդ
Կ'ոլորուէին բարդ ի բարդ.
Հրեշտակ պարուք խընդագին
Կը պատէին զարկուն անգին:
Ուշիմ՝ բարի մի հոգեակ,
Վայելչագեղ պատանեակ,
Օրհնիւք երկինք կը տարուէր,
Յերանուրբին անըսուէր:
Կը հընչէին շարականք
Վեհ իմաստիւք տխրականք.
Բայց զըւարթունք կ'երգէին
Վեր ելնելով բերկրագին
«Պատանեակ մի հաս ցորէն,
Մարդկանց ազնիւ սերունդէն
Ինկաւ հողուն մէջ այսօր.
Այլ ոսկեփունջք բիւրաւոր
Հասիկն եւ իւրն անդամսան
Անթիւ բերովք հոխացան:
Վաղանց կեանքի փոխանակ՝
Է կեանքն անհուն մըրցանակ»:

Արցունքն աչքս սրբեցին
Այս աւետիք երկնային,
Եւ ազդեցին մեծ յուսով
Հոգւոյս իմ ոյժ եւ կորով:

Խոցեալ սրբիդ բախասան
Խնչ այլ ըլլայ ուրիշ բան,
Ո՛վ դու Թերգեան, անձն ընտիր,
Զաւակաց հայր սիրալիր:

Զոր ես տեսայ այդ մանկիկ,
Այդ պատանեակ երջանիկ,
Սիրուն հոգեակ Արմանդ էր,
Ու դէպ երկինք կը թըռչէր,
Յագեցընել իւր ծառաւ
Լուսոյ ծովուն մէջ անբաւ.
Ո՛հ բող շընչէ զսրբոյդ ֆող
Անոր ամբիծ յուսոյն շող...
Տե՛ս, տե՛ս Արմանդ յերկինս արդ
Կը փափաքի հոգեզուարթ:

Հ. ԴԱՌԹ ՎԱՐԴ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ

Բերա

ԲԱՂԴԻՆ ՔՄԱՅԱՃՈՅՔԸ

(Ն Ո Ր Ս. Վ. Է. Պ)



Ձիով երկար պտոյտէ մը վերադարձեր ու սենեակիս մէջ միս մինակ բաղմոցին վրայ ընկողմաներ էի ուժարեկ, այն կիրակի իրիկունը՝ երբ Տիգրան ներս մտաւ։

— Բայց ի՞նչ այլանդակ մենասիրութիւն է աս ըրածդ, բարեկամ, ըսաւ ինծի. քանի որ պտոյտի պիտի երթայիր, ինչո՞ւ մեզի հետ չեկար, այնքան պնդեր էի. հոգիդ սիրես ըսէ՛, ինչո՞ւ խոյս կուտաս կոր մենէ։

— Որպէս զի միշտ այս յանկերգովդ գլուխս ուռնցնելէ դադրիս, ճշմարիտ պատճառը անկեղծօրէն պիտի ըսեմ քեզի այսօր. առաջ՝ երբ դուն ալ ամուրի էիր՝ գիտես օր չէր անցներ որ միասին չըլլայինք. բայց սիրելիս, հիմա այդքանը պահանջելու անտեղի է. երբեմն, կը հասկնամ. բայց միշտ՝ աւելորդ է իմ ներկայութիւնս։ Ձեր կուուց կուուցի, անվկայ պառայաններուն հաճոյքները խափանած կ'ըլլամ և ատով ես ալ կը նեղուիմ։

— Երբեք դուն մեր մտերմութիւնը չես խանգարեր։

— Ատիկա իբր compliment աղէկ. բայց եթէ կատարեալ անկեղծութեամբ պիտի խօսինք, փոքր խօսք մը կ'ըլլայ. էրիկ կնկան միջև այնպիսի գողտրիկ, այնպիսի անուշ հմայքներ, խօսակցութիւններ, գուրգուրանքներ կան՝ զորս անկարելի է որ երրորդի մը ներկայութիւնը չխանգարէ—որչափ ալ ընտանիքին մտերիմ մը ըլլայ այդ երրորդը. դուն, իբր քանի մը տարիներու ամուսնական կեանքի փորձառութեամբ օժտուած մարդ պէտք է գիտնաս ասիկա։ Եւ դեռ աւելին ըսեմ. քանի հեղ որ ես կնոջդ վարուելու կերպին մէջ նմարեցի զպալուած գորովանքի, կամ սրտաղեղումի արտայայտութեան մը սեթեւեթը, շատ բնական գտայ ատիկա և գոհեցայ։ Հասկցա՞ր։

Վայրկեան մը մտածկոտ կեցաւ Տիգրան, տաղտուկի յօրանջում մը ունեցաւ և յետոյ պատասխանեց.

— Լա՛ւ ուրեմն, հիմա կարգը ինծի եկաւ սրտաբաց խօսելու. պէտք է գիտնաս որ պարզապէս Մաքրուհին հետ առանձին չուրթ ալ չուրթն ըլլալու պէտքէն խոյս տալու համար է որ քու ներկայութիւնդ կուղեմ կոր ես ալ։ Հասկցա՞ր հիմա։

— Սակայն...

— Կեցի՛ր, վրայ բերաւ բարեկամս, գիտեմ ըսելիքներդ, քարոզ չեմ ուղեր. պիտի ըսես ինծի թէ ամուսնացած ատենս խենդի պէս կը սիրէի Մաքրուհին, թէ անոր մէկ ժպիտին, մէկ նայուածքին հոգի կուտայի. յետոյ պիտի հարցնես թէ քու բացակայութեանդ տարիներուն մէջ ի՞նչ տեղի ունեցած է իմ սէրս պակսեցնող ու պիտի եղբակցանես որ, եթէ այդպիսի բան մը տեղի չէ ունեցած՝ անբացատրելի և աններելի է հիմակուան անտարբերութիւնս։ Ասոնք են ըսելիքներդ, անանկ չէ՞. Հարկ չկայ, կեցիր ես բացատրեմ քեզի։ Իրա՛ւ է, գիտես արդէն, սիրեցի Մաքրուհին, խենդի պէս սիրեցի, այն ատեն միակ իտէալս, երազս, մտասեւեռումս եղաւ անունս իրեն տալ. և ունեցած դիրքիս շնորհիւ դժուար չեղաւ այդ երազս իրագործել՝ հակառակ տարիքի մեծակալ տարբերութեան մը որ կար իմ ու Մաքրուհին մէջ, որ դեռ տղայ մըն էր այն ատեն։ Այդ անմեղ, միամիտ, սիրուն, կարճ չըջազգեստ կրող աղջիկը, իր մանկական շարժումներովը գրաւեր էր սիրտս։ Անիկա ոչ նուազ տղայ մըն էր իր հարսանեկան ճերմակ չըջազգեստին մէջ։ Ատիկա ատենուան մը համար աղէկ. պուպրիկի մը պէս սիրեցի զինքը. բայց վերջ ի վերջոյ սրտիս մէջ խօլ, անսահման գորովը, սէրը. իր փոխադարձ ուղեց. հոն արծարծուած կրակը՝ իրեն հուսաարջերմութիւն վնասուց կնոջս սրտին մէջ. բայց իմ բոլոր ճիգերս ապարդիւն եղան Մաքրուհին հասկցնելու սէրը՝ այնպէս ինչպէս ես կը հասկնայի. ի՞նչ կուղես, տղայ մըն էր դեռ անիկա։ Կրքոտ, ջլազգրգիւ վայրկեաններ կ'ունենայի. որոնց միջոցին Մաքրուհին՝ անտարբեր կերպով ուսերը կը թօթուէր ու մէկդի կ'ընէր զիս։ Կուլայի երբեմն, ձեռքերը թմրեցնելու աստիճան համ-

բուրեղով, ծունգերուն քով ծնրադրած կու-
լայի. խեղճ աղջիկը տակնուվրայ կ'ըլլար,
վախոյող տղու մը պէս: «Ի՞նչ ունիս լալու,
բարեկամս, կ'ըսէր վախկոտ ձայնով մը»: Եւ երբ կը պատասխանէի թէ կը սիրեմ զին-
քը՝ այնքան միամիտ կերպով մը՝ «Ասոր հա-
մար կուլա՞յ միթէ մարդ» կ'ըսէր ինծի որ
կը մեղքնայի զինքը ու կը յուսահատէի ա'լ
սէրս իրեն կարենալ հասկնալէ ու փոխա-
դարձը ներշնչելէ: Ասոր համար բռնադատեցի
ինքզինքս աւելի հանդարտ ըլլալու, զգա-
ցումի յորդումներս դապելու, աշխատութիւնս
անհամեմատ կերպով շատցուցի՝ հոն մոռնա-
լու համար ինքզինքս. այդպէսով, պաղ ըլ-
լալը վարժութիւն մը եղաւ տակաւ, սիրտը
այրելով, այրելով՝ զինքը միշտ վառ ու ար-
ծարձուն պահող փոխադարձ սէր չգտնելէն՝
մոխրի խաւ մը կապեց ու մարեցաւ գրեթէ
վերջապէս: Մի կարծեր թէ դիւրին բան մը
եղաւ ատիկա. ոչ. տարիներ ամբողջ տառա-
պեցայ իրապէս անտարբեր ու անզգայ հան-
դարտութիւն մը գտնելու համար և քսան
տարի աւելի ծերացայ առանց այլ եւ այլի:
Ինչ որ ուրիշներ սովորաբար քառորդ դարի
մը մէջ կ'ապրին, ևս հինգ տարի մէջ ապ-
րեցայ: Դժբաղդութիւնը միայն հոս չէ սա-
կայն: Մաքրուհին անզգայ մը չէր, բայց
տղայ էր, և այդ տղայութեան շրջանը պիտի
անցնէր բնականաբար ու անցա'ւ, իր կարգին
տեղի տալով հասունութեան շրջանին ուր
սիրտը կը ծլի, կը սիրէ և սէր կը պահանջէ.
հիմակ այդ շրջանին մէջն է ահա կինս, շատ
քիչ տարբերութեամբ ճիշդ իմ առաջուան
վիճակ ունի հիմա. խենդի պէս կը սիրէ
զիս և ատիկա կը տառապեցնէ՝ երկուքնիս
ալ: Ան կը տառապի յիշելով իմ առջի բուռն
անյագ պաշտումս ու կարծելով թէ ուրիշ
մէկը կը սիրեմ ես, միշտ կ'ափածելով, մինչ
ևս ալ կը տառապիմ սիրտիս խորը քննելով
ու մոխիր, պաղած մոխիր միայն գտնելով
հոն, չկարենալ փոխադարձեւում համար անոր
սիրաբորբոք փղձկումները: Կերգնում քեզի
որ Մաքրուհիէն ուրիշ կ'լին չեմ սիրած բնաւ.
և բոլոր կ'լինիրուն մէջ հիմա միմակը որուն
հանդէպ քիչ մը համակրութիւն զգամ, ինքն

է դարձեալ. և սակայն այդ համակրութիւնը
չբաւեր իրեն, ինչ որ կը հասկնամ, շատ լաւ
կ'ըմբռնեմ՝ ճիշտ միեւնոյն վիճակէն անցած
ըլլալուս համար ես ինքս ալ: Փորձեցի, ճշդ-
նեցայ ես ալ իմ կրակոտ սէրս վերաբարձել,
բայց ի դուր, ինչպէս ըսի, տարիքի խնդիր
է, ծերացեր եմ սրտով: Հիմա հասկցա՞ր թէ
ինչո՞ւ կ'ուզեմ խոյս տալ գոնէ դուրսը, պը-
տոյտներու, զըօսանքներու մէջ կնոջս հետ
գլուխ գլխի ըլլալէ. արդէն տունը կը տանջէ
զիս իր յաւիտենական «Վրաս առաջուան
սէրը դուրգուրանքը չունիս, Տիգրան կը
պաղատիմ ըսէ՛ պատճառը» յանկերգովը, դոր
սակայն կը ներեմ իրեն ու կը ջանամ կարելի
եղածին չափ համոզել զինքը թէ դարձեալ
կը սիրեմ—ինչ որ դուր փորձ է, գիտեմ, ու-
րովհետեւ շրթունքներուն «կը սիրեմ» ըսելը
չբաւեր անոր: Կեանքիս բոլոր մանրամաս-
նութիւններուն, վարուելու կերպերուս, խօս-
քերուս, ամէն բանի մէջ յայտնի է վերջա-
պէս որ անզգայ ու անտարբեր եղած եմ ա'լ.
ըստ իս ամէն բան կը կեղծուի, բայց սէրը
կարելի չէ կեղծել:

Երբ բարեկամս դադրեցաւ խօսելէ, ա-
ռանց իրեն պատասխանելու՝ խորհեցայ թէ,
այս հիմա ապերձանիկ եղած միութեան պա-
տասխանատուն ո՞վ կրնար ըլլալ: Բարեկամս
սիրած ու ամուսնացած էր, բայց սիրոյ կրակը
անփոխադարձ մնալուն մարած էր. ի՞նչ յան-
ցանք ունէր խեղճը: Աղջիկը տղայ մըն էր
երբ ամուսնացուցեր էին զինքը, մարդու մը
հետ որ կը խենդենար իր վրայ և դոր սա-
կայն չէր հասկնար, ի՞նչ ընէր: Եւ երբ սկսած
էր հասկնալ, սիրել, մարդը անզգայ մը
եղած էր—ինչ յանցանք ունէր ինք:

Բաղդի անշահ քմահաճոյք մը ասիկա,
այս դժբաղդութիւնը: Եթէ աղջիկը հինգ
տարի ետքը կամ տղան հինգ տարի առաջ
ծնած ըլլային, երջանկութեան բոյն մը պիտի
կրնային չիսնկ անտարակոյս:

Ու այնպէս չըլլալը իրենց դժբաղդու-
թեանը պատճառ եղած էր ահա:

Բաղդի քմահաճոյք: Ուրիշ ի՞նչ կրնայ
ըսուիլ ասոր:

ՊՈԿՄՈՐՆՔ



Ըզքեղ յաճախ կը մոռնամ ես
Բոլոր այն միւս կիներուն մօտ
Որոնք կ'օրբեն, աղու մը պէս,
Զիս գիրկերնուն մէջ տարփանքոտ:

Եւ վայրկեաններ ունիմ այսպէս
Երազացնոր յուզումներու,
Ուր՝ յիշատակդ, յանկարծ քովէս
Կ'անհետանայ, փախչի հեռու:

Բայց այս սիրոյ երազանքէն
Այնքան տխուր է ապաքէն
Արթնալը, որ վիրաւոր

Սրտիս նման եթէ դտնալ
Ըլլայ դիւրին ուրիշ մըն ալ,
Պիտի սիրեմ զայն իրաւ որ:

ՏՕՄԻՆՕ

ՎԱՌԱՐԱՆԻՍ ԱՆԿԻՒՆԷՆ



ԲԵՐՍ, 4 Նոյեմբեր
Երեքշաբթի

Վառարան մը ուր դեռ կանուխ է կրակ
Վառելու համար, բայց որուն մօտիկ հիմա-
կուց հեշտ է նստիլ, գիշերները, սպասելով
ձիւնաբեր եղանակին: Այդ անկիւնը, ձմրան
խուցին անկիւնը, իր ձգողական զօրութիւնը
ունի ամէն ճաշակի տէր անձերու համար.
հոն է որ իրիկնամուտին՝ ընտանիքի հայրը
կուղայ ինքնամիտփութիլ օրուան խոհերուն
մէջ, մինչ պարահանդէսէն դարձողներ կամ
կանանց սեղանին առջև յուսնողներ իրենք
ալ, արշալոյսին, կ'ընկողմանին հոն՝ կրկնե-
րեւոյթը ունենալով իրենց անցուցած վա-
յելքին կամ կրած յուսախարութիւններուն:
Զօռասէր, առանձնապէս, աշխատող, հա-
սառու, արուեստագէտ, արհեստաւոր, ըն-
կերական կեանքի ո՛ր դասակարգին ալ պատ-
կանինք, չէ՞ մի որ իւրաքանչիւրս մեր նախա-
սիրական անկիւնը ունինք, փոյթ չէ թէ մէ-
կուն համար թաւապատ բաղմոց մը ըլլայ
ան՝ ու միւսին համար պարզ սեփք մը:

Ասով հանդերձ, սրտի սեղմումով, տեսակ
մը ցաւով էր որ բաժնուեցայ Վոսփօրէն ու
թողուցի Բիրէճ-Պուրնուի առանձնարանս ուր
անցուցեր էի ամրան հեշտ ամիսները: Բիւր-
ներու ստորոտը՝ հինաւուրց ծառերու շուքին
տակ, ու ծովուն ալ մօտ, բնութիւնը ինչ
պէսպիսութիւններ կ'ընծայէր հան. նոյն իսկ
աշնան առաջին ցուրտերուն, մշուշապատ առ-
տուները, հաճոյք մըն էր պատուհանէն դի-
տել դուրսը, մեծափառ դարթնումը Վոսփո-
րին և տակաւ բարձրացումը արեւին որ ծո-
վեղրին երկայնութեամբ խոտի դէզերուն ցօ-
ղերը կը չորցնէր, ու կը գունագեղէր ջուրին
ալիքները. կէս օրին մօտ, գաղջ էր օդը,
ամրան տապէս ու ձիւրան սարսուէն դերձ
խառնուրդ մը տաքութեան ու պաղութեան
որ մարմինը կը թմրեցնէ: Դիպուածով ե-
զերքին մօտեցող առաքաստանաւ մը կամ
հոն գիշերելու եկող ձկնորսի նաւակ մը՝
վերջին շաբաթներուն մէջ՝ միակ պատահար-
ներն էին մեր օրուան կեանքին, միօրինակ
ու խաղաղ: Այդ ծովու մարդոց կենցաղը
որչա՞փ կը տարբերի մերինէն. բոլորովին
առնական ընաւորութեամբ, թէեւ ոմանց
քով վայրագ ըլլալու աստիճան, անհաւա-
սար պայքար մը մղելով միշտ ալիքներուն
դէմ, առանց հետաքրքրուելու ցամաքին,
սակաւապէտ, փիւր, կայտառ մարդու տի-
պարները չեն պակսիր անոնց մէջ: Առա-
գաստանաւերը մանաւանդ, որոնք բաւական
հեռաւոր ճամբորդութիւններ կը կատարեն,
իրենց սակաւաթիւ նաւազներով, պղտիկ հա-
մայնքի մը կեանքը ունին իրենց մէջ: Իրի-
կուն մը որ անոնցմէ մէկը եկաւ խարսխել
մեր գիւղին առջև, առտուան յաջող հովե-
րուն սպասելու համար, ժամերով ուշադրու-
թիւնս ու հետաքրքրութիւնս սեւեռած մը-
նացին իր վրայ. ծովային—գեղջիկական ա-
ղուորութիւն մը ունէր խարոյկը զոր վառե-
ցին նաւուն ծայրը, և մեծ ու պղտիկ, շուրջը
բոլորուած, սկսան պատրաստել իրենց կե-
րակուրը, մինչ պահապան շունը՝ երկու թա-
թերուն վրայ կեցած՝ կը հսկէր ետեւի կող-
մը, այդ միջոցին ամայի: Միակ պտուկի մը
մէջէն ճաշեցին ամէնքն ալ, միեւնոյն հողէ:

բարձրէն խմեցին, ու ցրուելով հոս հոն՝ նա-
ւաստիներու երգ մը սկսան երգել յունարէն,
միօրինակ, տխուր երգ մը որուն մէջ սիրոյ
ու կարօտի շեշտ մը կար,—իրենց տու-
նին ու ընտանիքին կարօտներուն,—որ ա-
նարձագանգ կը մարէր բաց երկինքին տակ:
Յետոյ, ձայները լռեցին, ու պլպլուն միակ
կանթեղ մը վառ մնաց կայմին մէջտեղ, ու
րուն ստորտը կը հսկէր պահպան շունը.
նաւազները քնացած էին: Արշալոյսին, ա-
ռաջին ակնարկս առաջաստանաւին. կողմը
սեւեռել ուղեցի. արեւածագէն առաջ
մեկնած էր դէպի Սեւ ծով: Նոյն գի-
շերը, ահաւի փոթորիկ մը ծագեցաւ, ու
օրեր վերջ՝ լրագիրները պատմեցին ծո-
վային աղէտներու չարքեր. ի՞նչ եղաւ այն
ճերմակ սիրուն առաջաստանաւը, նորէն կըր-
ցա՞ւ դառնալ մեր ափերուն մօտ, թէ ոչ՝
արկածեալներէն մէկն ալ ինքն էր, իր նա-
ւաստիներով:

Վերջին տպաւորութիւնն է այս դոր կը
կրեմ Վոսփորի կեանքէս, որ հիմայ հեռաւոր
յիշատակի մը պէս կը ներկայանայ մտքիս.
Թէեւ երկու օր է տակաւին որ վերադարձած
հաստատուած եմ Բերա: Գիւղական լու-
կենայ մթնոլորտին վարժութիւնը՝ օտարական
մը, նորեկ մը կը դարձնէ զիս, երբ իրիկունները
կ'անցնիմ Շիտակ ճամբէն ուր ոգեւորու-
թիւնը, պերճանքը, ծածկուած աղքատու-
թիւնը, դժբաղդները ու երջանիկները ան-
գիտակցաբար կ'անցնին իրարու քովէ: Ու
կը սկսիմ ընդդէմարել ծանօթ գէմքեր,
մասնաւորապէս դրական ու լրագրական աշ-
խարհէն—եթէ չատ մեծ չէք դռներ «աշ-
խարհ» բառը մեր պզտիկ շրջանակին համար:

Ուշագրաւ հանդիպումներէս մէկը կը հա-
մարիմ՝ անունով ծանօթ ու անձով անծանօթ
երիտասարդի մը հետ ճանչւորելս, Բաֆէ
Ռիշի մէջ, ուր բարեկամ մը կը ներկայացնէ
մեզ իրարու. —«Ղուկաս Վարպետեան, Իզ-
միրէն» —«Մասիսի Մենասէ'րը»: —Պ. Վար-
պետեան, թէեւ առեւտրական գործով եկած
Պոլիս, գրական անձ մըն է ու այդ հանգա-
մանքով բնական էր որ հետաքրքրուէի իրեն:

Բարեկիրթ՝ ըսին ծայրայեղ առումովը, հա-
մակերելի ու խօսուն, լաւագոյն տպաւորու-
թիւնը կը թողու առաջին անգամ իր հետ
տեսակցողին վրայ, յաջորդական տեսակ-
ցութիւններու և մտերմութեան մէջ այդ
տպաւորութիւնը աւելի շեշտելու արժանի-
քով: Արեւ. Մամուլին պատուակալ աշխա-
տակիցներէն մէկն է ինքը, ու Մասիսին մէջ
ալ գրած է Ստեփան Ոսկանի յիշատակին
նուիրուած յօդուած մը: Կը խօսակցինք Պոլ-
սայ ու Իզմիրի մտաւորական կեանքին ու
գրագէտներուն վրայ փոխադարձաբար: Պ.
Վարպետեան, իր տրամադրելի ժամերուն
մէջ, այցելած է արդէն քանի մը խմբագ-
րատուններ ու տեսակցած է լրագրագետնե-
րու, գրչի մարդերու հետ. կարճ պարբերու-
թիւններով՝ բայց ցայտուն կերպով ու մտա-
ցիօրէն կ'արտայայտէ իր տպաւորութիւնները.
Իմ հարցումներս կը դառնան, գլխաւորաբար,
Քրիզանթէմին շուրջը որու մասին հաճոյքով
կը լսեմ համակրալից խօսուածքը Իզմիրցի
այցելուին, որ կ'աւելցնէ թէ Իզմիրի հայ
համայնքին լաւագոյն շրջանակներուն ու սա-
լոններուն մէջ կը փնտռուի միշտ Քրիզան-
թէմ, ո'չ միայն իր գրուածքներովը՝ այլ
նաեւ իր անձովը: Չեմ դարմանար, ու կըրկ-
նապէս հաճոյք կըզգամ: Ստեփան մը կայ ե-
ղեր, ուր գրագէտները, խմբագիրները «վար-
ժապետ»ի պէս բան մը կը նկատուին եղեր,
եթէ արուեստով ուսուցիչ ալ չըլլային: Եթէ
հարուստի մը սեղանակից ալ ըլլային, սե-
ղանին վարի ծայրը պէտք էր նստէին, յար-
գամեծար ձեւով. իսկ ընտանեկան լաւագոյն
դուամարումներու մէջ անոնց մտերմական
մուտքը՝ հազուադէպ էր. վերջին քսան տա-
րիները մինչև մէկ աստիճան բարեփոխեցին
մեր այս բարքերը, թէեւ աւելին պէտք էր
ըլլար:

Իզմիրի առաջնորդական խնդրին վրայ,
որով կը հետաքրքրուինք այստեղ ալ, վե-
րապահումով կը խօսի Պ. Վարպետեան և
իրաւունք ունի, քանի որ կանխահաս է դեռ,
սաչալիք ակներև է միայն, որ Իզմիրցիները
կը փափաղին ուսումնական, գործօն ու աղ-
նիւ եկեղեցական մը ունենալ իրենց առաջ-

նորդ, փոյթ չէ թէ վարդապետ ըլլայ. չէ՞ մի որ Մելքիսեդեկ Սրբազան ալ պարզ վարդապետ մըն էր երբ առաջին անգամ կոչուեցաւ Իդմիրի հովուութեան:

Կը ջաւիմ որ կարճատեւ եղաւ տեսակցութիւնս Պ. Ղուկաս Վարպետեանի հետ, ինչ որ արգելք չէր ձեռքի սիրալիր սեղմումով մը բաժնուելու իրմէ:

ՄԵՆԱՍԻՐ

ՄԵՆԱՍԻՐ իրկած է մեզ նաեւ, իր այս նամակին հետ, կարճ գրութիւն մը՝ անգլաֆոնետիկ հրատարակելի, ո՞ր աւասիկ.—

Այս անգամ, Մաղիկի խմբագրութիւնը՝ հաշտ դժգոյնմէ մը մղուած անուշտ՝ ես կեցեր է իր նախորդ թելադրութենէն որով չէր ուզած հրատարակել Պ. Մալխասի պատասխանը, և այս վերջինն ալ չէ յօժարեր աննկատ թողուլ իրեն ուղղուած դիտողութիւնները: Երեւոյթը բարենշան է: Միայն թէ, իբրեւ երկրորդ և նոր միջոց մը փախուստի, Բօքի թարգմանիչը նստարական վաւերագիր կը պահանջէ՝ հաստատող թէ Մասիսի 41րդ թիւին մէջ իմ արձանագրած նօթերս Տիգրան Ելքէնճեանի յայտարարութիւններն էին արդարեւ: «Իմ իրաւունքս է սպասել որ,—կը գրէ,—բուն շահ ունեցողը հաստատէ այդ հարցումները և ճշդէ անոնց բանաձեւը, որպէս զի ապագային տեղի չըմնայ թիւր մեկնութեանց» և այլն: Ամբողջ գիւտ մը չէ՞ այս պահանջումը՝ վիճաբանութեան մը հիմնական կէտերէն խոյս տալու համար, շատ մը բաներ ըսելով հանդերձ:

Բանաձեւը, զոր ճշդուած տեսնել կ'ուզէ Պ. Մալխաս, արդէն իսկ այդ հանգամանքով ներկայացաւ հօկտ. 11ի Մասիսին մէջ ու անգամ մըն ալ ամփոփ կերպով կրկնուեցաւ սոյն չաբաթաթերթի հօկտ. 24ի թիւին մէջ: Ծան կամ վրաս ունենալու խնդիր չիկայ այստեղ: Ասոր հեղինակն է միեւնոյն անձը որ իր Լոուրեան մը առթիւ կարկեցուցիչ յօդուածովը ցոյց տուաւ թէ ինչպէ՞ս լրջօրէն ու հմտօրէն գիտէ վիճաբանիլ լեզուական հարցին վրայ և որ, Մալխասի մը

յարուցած ճշմիմ նկատումներուն առջև չէ՞ որ տեղի պիտի տար: Իսկ դանոնք հրապարակողը ես ինքս եմ, կամ թէ ընդդիմախօսիս սրամիտ բացատրութեամբ՝ «Մասիսին Պօղազ—Իչիի թղթակիցը»:

Պ. Մալխաս, պարտկելու համար իր այս փախուստը,—մարդու մը պէս որ կ'ուզէ փախչիլ տունէն և դուռը գոց դնելով իր առջեւ՝ պատուհանէն կը ցատքէ և սրունք, ներք կը խորտակուին,—Աշխարհաբարեանի և Գրաբարեանի խօսքեր կը խառնէ այս անգամ, այն ակնկալութեամբ որ թերեւս Աշխարհաբարեաններուն մէջէն պաշտպան բազուկներ օգնութեան հասնին իրեն: Խեղճը անանկ կարծեր է թէ մինչեւ հիմայ Ոսկեղարու և Բաղրատունիի մասին եղած վիճաբանութիւնները Գրաբարի և Աշխարհաբարի խնդրոյն կը վերաբերէին: Եւ այդպէս կարծելով—Գործածելու համար իր ոչ նուազ սրբամիտ ուրիշ մէկ բացատրութիւնը—«Երկայն կօշիկները խաղմայի խըրքի տեղ առնողը» ինքն իսկ չըլլա՞ր: Մինչդեռ, ատոնց սահմանները շատոնց գծուած են, և այդ խնդրոյն վրայ խօսող անգամ կարելի չէ որ դանուի այլեւս: Գրաբարեան թէ Աշխարհաբարեան,—Մալխասի բառով, վասն զի ասանկ բաժանումներ այլեւս չիկան,—մարդ կրնայ զուրկ ըլլալ քննասիրական ոգիէ, կամ՝ ընդհակառակը, օժտուած ըլլալ քննասիրական ոգիով: Հակառակը պնդել, Մալխասութիւն է:

Այս Պարոնը տուն մը կ'երեւակայէ ուր պիտի դատուին ու դնահատուին եղեր Ոսկեղարը ու Բաղրատունին: Եւ այդ տունէն դուրս ելլելու են եղեր,—եթէ իրեն հարցուի,—նախ Վենետիկցիք՝ իբրեւ ոչ-քննասէրք, յետոյ Վիէնացիք ալ՝ իբրեւ ոչ-ճաշակագէտք: Բնականաբար, Աշխարհաբարեաններն ալ—միշտ Մալխասի յարանուանութեամբ—պիտի ուղեն դուրս ելլել այն տունէն, իրենց domainը չհամարելով զայն, և... Բօքի թարգմանիչը միայն պիտի մնայ հոն:

Պ. Մալխաս կը փափագի «իրեն արժանի» ընդդիմախօսներ ունենալ և կ'ուզէ որ ա-

նոնք «գորաւոր ուս» ունենան: Կը յանձնա-
րարենք իրեն դիմել առ դուրս Պոլսոյ և
Ղալաթիոյ մաքսատանց: Բարկացած է թէ
ինչո՞ւ երկու կշիռ կը գործածուի եղբիւր Հ.
Դրիգորիս Դալէմքեարեանի քննադատական
տետրակին եւ իր քաւիճական յօդուածնե-
րուն համար: Հարկա՛ւ այնպէս պէտք էր.
մէկը՝ կշռելու համար Ոսկին. և միւսը՝ կըշ-
ռելու համար... պարկ մը ածուխը:

Քննելու պէտքին վրայ անգամ մըն ալ
կ'անդարդաւո՞նայ Պ. Մալխաս եւ դարձեալ
քաւիճ կ'ընէ թէ ինչպէ՞ս պէտք է քննել:
Ժողովուրդական բացատրութեամբ մը՝ պիտի
ըսեմ «ականջը խօսի Տիգրան Ելքէնճեանին»:
Նորայր Բիւզանդացիի համար ալ կ'ըսէ թէ
իրեն համակարծիք կրնայ ըլլալ քննութեան
պէտքի մասին: Մ'ա՛րդ Աստուծոյ, ո՞վ ըսաւ
ձեզի թէ պէտք չէ քննել: Դեռ չի հասկը-
ցա՞ք թէ ի՞նչ է ըսուածը. նորէն կրկնենք.
քննելո՞ւ է, քննադատելո՞ւ է, ուսումնասի-
րելո՞ւ է, բայց այդ գործը ձեզի չէ մնացեր:
Բագրատունիի նման հսկայ մը քննել բարձր
գործ է, կ'ըսէք:—կրկնելով մեր խօսքը, բայց
մոռացութեան տալով անոր միւս կէտը՝ թէ
դուք ի՞նչ գործ կրնայիք ունենալ այդ բազ-
մահմուտ անձնաւորութեան եւ այդ քննու-
թեան հետ:

Հապճեալով զրկելով այս սողերը Մա-
սիսին, խմբագրութեան եւ մանաւանդ ըն-
թերցողներուն ներողութիւնը կը խնդրեմ
եթէ երկարեցաւ: Վէճերնիս անանկ ընդդի-
մախօսի մը հետ է, ինչպէս գիտէք եւ նա-
մակիս սկիզբը բացատրելի, որ վիճաբա-
նութենէ խոյս կուտայ, բայց չեղ ճամբաներ
կը գտնէ էջեր լեցնելու համար: Զինքը ու-
ղիղ գիծի վրայ բերելը դժուար եւ յոգնե-
ցուցիչ գործ է. բայց գէթ ընթերցող հա-
սարակութիւնը պէտք էր լուսաբանել:

ՄԵՆԱՍԻՐ

Քեա. 4 Յոյեմբեր 1903

Մենասէր իր վերջին «Վոսիորեան Նա-
մականի»ին մէջ, ուր կը խօսէր մեր նոր
բանաստեղծներուն վրայ, գրչի վրիպանքով
մը, ինչպէս ինքն ալ կ'իմացնէ մեզ. Վ.—ին
վերագրած էր Լաւարդիւնի «Լճակ»ին և ու-
րիշ երկու ֆրանսերէն ասանաւորներու
թարգմանութիւններ զորս կատարողն է մեր
ուրիշ ծանօթ մէկ աշխատակիցը:

ԽՄԱԳԳՐԱԿԱՆ ՆՕՐԵՐ

Ամեն. Տ. Մաղախա Օրմանեան Ս.
Պատրիարք հինգշաբթի օրը բոլորեց Կ.
Պոլսոյ Պատրիարքական Աթոռը բարձրանա-
լուն եօթներորդ տարեդարձը: Այս առթիւ,
Ն. Սրբազնութիւնը ընդունեց՝ թէ՛ նոյն
առաւօտուն իր բնակարանին մէջ և թէ՛
յետոյ Պատրիարքարանի մէջ՝ շնորհաւորական
բազմաթիւ այցելութիւններ եկեղեցականնե-
րու և աշխարհականներու: Նոյնպէս շնորհա-
ւորական հեռագիրներ ստացաւ զաւառներէն:

Մասիսի խմբագրութիւնն ևս այս բարե-
բաստիկ առթիւ իր խնդակցութիւնները կը
մատուցանէ Ն. Սրբազնութեան:

Խառն ժողովը իր վերջին նիստին մէջ
հաստատեց Տ. Ներսէս եպիսկ. Ասլանեանի
ընտրութիւնը՝ իրրեւ առաջնորդ Պուլկարիոյ
Հայոց. իսկ Ռումանիոյ հոգեւոր հովու-
թիւնը յանձնելով Տ. Վահան Վրդ. Յակոբ-
եանի՝ որոշեց եպիսկոպոսական վկայական
տալ անոր:

Աստիսանի առաջնորդ Տ. Արիստակէս
արքեպիսկ. Սեդրակեանց՝ Սամարաէ վերա-
դարձին՝ հրաժարական տուեր է իր պաշտօ-
նէն: — Երեւանի առաջնորդ Տ. Սուքիաս
արքեպիսկ. Պարդեանցի տեղ, որ Օրէնպուրկ
զրկուած է, նոյն թեմին առժամեայ առաջ-
նորդ նշանակուեր է Տ. Յովհաննէս եպիսկ.
Շիրակունի:

Ճարտարագէտ Պ. Հրանդ Անդրէասեան,
որ Արեւելի ու Մասիսի ընթերցողներուն
ծանօթ է իր արհեստագիտական հմտալից
յօդուածներովը, գիտական աշխարհի վերջին
նորութեան՝ Երկարաշարժ Երկաթուղին
հաստատման առթիւ զրկած է մեզ շահեկան
տեսութիւն մը զոր հրատարակած ենք այ-
սօրուան թիւով: Կը սիրենք յուսալ որ մեր
մասնագէտ աշխատակիցը պիտի ուզէ գրել
նաեւ այդ Երկաթուղին կիրարկման ման-
րամասնութեանց վրայ, որոնց մօտէն գիտակ
է՛ շինութեան գործին մէջ ինքն ալ ունեցած
ըլլալով իր մասնակցութեան բաժինը՝ իրրեւ
վկայեալ ճարտարագէտ: Եւ առիթէն կ'օգ-
տուինք, շնորհաւորելու համար զինքը ար-
հեստագիտական ճիւղին մէջ իր ունեցած յա-
ռաջիմութեանը համար Գերմանիոյ մայրա-
քաղաքին մէջ:

ԼԻԼԻԵՆ ՄՕՐՐԻՍ

10.

(LILLIAN MORRIS)

Գրեց ՀԷՆՐԻԹ ՍԷՆԲԵԴՆԻՉ.

Թարգմ. ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՅ.

Այն ատեն միայն կրցայ ըմբռնել, թէ այդ ահաւելի ուղեւորութիւնը որչա՛փ յողնակոյցացած էր զլիս: Վիրաւորութիւնս առաջ, սիրտս կը դողար Լիլիէնի տկարութիւնը ու նիհարութիւնը տեսնալով. բայց երեք օր պառկելէ ու տենդ քաշելէս ետքը, ինքն էր որ կը սարսափէր իմ այդ աստիճան խոնջ, վատութ ու դունատ վիճակէս: Մ'որթս ոսկորիս անցեր էր, և ալ ուժ չունէի վեր բռնելու գլուխս՝ որ մէկ ուսէս միւտը կերերտըկար, հակառակ անոր որ, բոլոր ուժովս կ'աշխատէի այդ ողորմելի վիճակս սքօղելու համար քիչ մը:

Ատով հանդերձ, պարտաւորեցայ նորէն հեծնալ ա՛յն միտի՛ ձին որ ողջ մնացած էր և կարաւանին գլուխը անցնել: Ամէն կողմէն կասկածելի նշաններ երեւցած էին ինծի: Տաքութիւնը անտանելի էր. միջնուորսը լեցուն էր գոլորշիով մը՝ որ հեռաւոր հրդեհի մը մոխրին կը նմանէր. հորիզոնը ծանրցած ու միջնած էր: Անկարելի դարձած էր մեզ երկինքը տեսնալ, և արեւին ճառագայթները՝ որո՞ք հազիւ կրնային ծակել թանձր մթնոլորտը, կարմիր ու հիւսնադադին բան մը ունէին մեզի՝ հասած ատենսին. անասունները անձկութեան նշաններ ցոյց կուտային, դժուարութիւնով կը շնչէին և ակամային կը կճրտէին: Իսկ մենք, կարծես կրակ կը շնչէինք:

Այդ յեղակարծ տակնուվրայութեան պատճառը, — գէթ ես անանկ կը կարծէի, — ըլլալու էր մէկը հեղձուցիչ այն հովերէն՝ որոնք մասին խօսած էին ինձ արեւելք գտնուած ատենս, որոնք Ափրիկէի առաջին տարածութիւններուն մէջ եփ եկող խորշակը կը յիշեցնեն և Ժիլաի անապատէն գալով, երբեմն անվերջանալի ու յուսահատական կերպով կը նեղեն Հիւսիսային Ամերիկան: Մեր շուրջը ամէն բան ահաբաժ կը մնար, և խոտի ոչ մէկ ծիլ կը ծածանէր: Իրիկուան դէմ արեւը ար-

իւնի պէս կարմրեցաւ, և դիշերն ալ մասնաւորապէս կսկծալի եղաւ: Հիւսնդները ծարաւ կը մարէին և մեծաբարձաւ ջնճիկը նոսային. չունեիր կ'ունային: Մօտակայ տեղուանքը դացի հետազօտել, ասպնով ըլլալու համար որ հրդեհ չիկար բացաւայրին մէջ. բայց ոչ մէկ տեղ մը կրակին նշոյլը տեսայ: Այն ատեն տարուեցայ խորհելու որ հրդեհ մը լափած ըլլալու էր խոտերը, բայց բնական պատճառ մը կասեցուցած էր զայն մեզի հասնելէ առաջ:

Բայց, նորէն մեծ մտահոգութիւն մը տիրեց ներսս, երբ հետեւեալ օրը տեսայ որ ճագարներու, յամոյրներու, սկիւռներու, գոմէշներու խումբեր, իրենց ռոքերուն բոլոր ուժովը կը փախչէին դէպ ի արեւելք, և ճշդիւ կուգային Քալիֆօրնիայէն՝ ուր մենք կ'ուղղուէինք այնչափ ջանքերով: Ծառ չանցած՝ միջնուորսին տաքութիւնը պակսեցաւ: Ալ աւելի կը հաստատուէի այն համոզումիս մէջ թէ մեր առաջը, բացաստանը այրած ըլլալու էր և վայրի կենդանիները կը փախչէին պարզապէս ի խնդիր երկրի մը՝ ուր կարելի ըլլար իրենց ճարակելու նոր խոտեր գտնալ: Բայց մեզի համար անհրաժեշտ էր աւելի առաջ ընթանալ, հրդեհուած տեղը հասնիլ, հասկնալու համար թէ պիտի կրնայինք կտրել անցնիլ զայն կամ թէ պիտի հարկադրուէինք չըջա՞նք ընել անոր: Այն ատեն, իմ հաշիւովս, Սիէրրա Նէվադաէն հազիւ երեք հարիւր մղոն հեռու պէտք էինք ըլլալ, այսինքն դրեթէ քսան օրուան ճամբայ: Որոշեցի հոն հասնիլ ինչ որ ալ ըլլար, և նոյն իսկ եթէ ատոր համար ինքզինքնիս վրայ տալ հարկ ըլլար:

Հիմա դիշերով կը ճամբորդէինք. ցորեկին տաքութիւնը այնչափ սաստիկ էր որ անասունները չէին դիմանար, և խեղճ կենդանիները վակօններուն մէջ տեղուանքը հա-

զիւ պուտ մը շուք կը գտնային հանգստա-
նալու համար:

Գիշեր մը չէի կրցած ձի հեծնալ, այն
տկարութեանս պատճառով որ վէրքէս առաջ
կուգար դեռ և մեր վակօնին մէջ, Լիլիէնի
քով նստած էի, երբ յանկարծ անիւններուն
աղմուկը մեղմացաւ, կարծես թէ հողին տե-
սակը մէկէն ի մէկ փոխուած ըլլալուն հա-
մար: Միեւնոյն ատեն, ամբողջ կարաւանին
երկայնութեանը վրայ «կեցէ՛ք, կեցէ՛ք»
բառերը լսեցի: Դուրս նետուեցայ և տեսայ
կառավարները որոնք հողին վրայ ծռած,
խնամքով կը զննէին դայն: Մէջերնուն մէկը
սլօռաց:

— Հոս նայեցէ՛ք, մեծաւո՛ր, ածուխի վը-
րայէն կերթանք կոր:

Իմ կարգիս՝ ես ալ ծռեցայ: Իրաւ էր,
մարգագետինը այրած էր: Անմիջապէս կա-
րաւանին հրամայեցի կանգ առնել և գիշեր-
ուան մնացած մասը տեղերնուս չի շարժե-
ցանք: Առտուն, առաջին շողերուն հետ,
զարմանալի տեսարան մը պարզուեցաւ աչ-
քերնուս առջև. աչքդ առածին չափ տեղի
վրայ խոտերը, մացառները, հողը ինքն իսկ
ածխացած էին և ածուխին մակերեսը այն
աստիճան հարթածաւալ էր ու յղկւած որ,
կենդանիներուն սրունքները և վակօններուն
անիւնները, հայելիի մը պէս կը ցոլանային
մէջը: Անկարելի էր մեզ ճշգրիտ գաղափար
մը կազմել հրդեհին տարածութեանը վրայ,
ինչու որ հորիզոնը տակաւին մոխրով լեցուն
ու լաւագոյն երևոյթ մը ունէր. բայց ես
անմիջական հրաման տուի դէպ ի հարա-
դառնալու, անանկ որ կրնայինք այրած տե-
ղին քովէ ի վեր երթալ, առանց բոցերէն
պաշարուելու վտանգին ենթարկելու ինք-
զինքնիս: Փորձով կը ճանչնայի այն վտանգ-
ները որոնք այրած երկրի մը մէջէն ելած
ճամբորդութեան մը ատեն կը ներկայանան,
ուր փոխադրութեան ծառայող կենդանիներ-
ուն համար խոտի ծիւ մը անգամ չես գըտ-
նար և ուրկէ որսի կենդանիները փախած
են արդէն չատոնց, սարսափահար: Հովը հա-
րաւէն կը փչէր և հաւանօրէն աղէտքը քշած
տարած էր դէպի հիւսիս. այդ պարագային,

իմ բռնած ուղղութիւնովս մեծ հաւանակա-
նութիւն ունէի շուտով գտնալու այրած մա-
սին սահմանագիծը:

Իրաւ էր, մարդիկս հնազանդեցոն ինծի,
բայց զգացի որ տեսակ մը խուլ դժգոհու-
թիւն կար մէջերնին. այն կիսաշրջանը զոր
ընելու վրայ էինք, չափէն աւելի կ'երկնցնէր
ճամբանիս: Անկէ դատ, հետեւեալ գիշերը
մուխը ալ աւելի թանձրացաւ և տաքութիւնը
այն աստիճան ահռելի էր որ օդը կարծես կը
թրթռար մեր չորս բոլորը: Յետոյ պատա-
հեցաւ բան մը, այն աստիճան հրաշալի որ
ամէն մարդ ապշահար եղաւ:

Մթնոլորտը լեցնող ծուխը ու գոլորշիները
մէկէն ի մէկ, կարծես տրուած նշանի մը վը-
րայ անհետացան և մեր առջին Սիէրրա Նե-
վադադան բարձրալանդանցաւ, կանանչ, ծիծ-
ղուն, դմալելի, իր ձիւնապատ փողփողուն
գագաթներով և մեղի այնչափ մօտ որ ա-
ռանց դիտակի կրնայինք համրել իր ցցուածք-
ները, գագաթները, լիճերը ու անտառները:
Մեզի անանկ եկաւ որ շոճիներու առողջա-
ւէտ բոյրովը օծուած զով զեփիւռ մը կ'իջ-
նար անկէ վար, տափաստանին հրավառ շուն-
չը վանելով տանելով և մենք քանի մը ժամ-
ուան մէջ պիտի հասնէինք այդ լեռնաշղ-
թային ծաղկափիւռ առաջին զառիթափնե-
րուն վրայ:

Այդ տեսարանին առջև, սոսկալի աշխա-
տութիւններով ու անապատական տաժանիկի
գնացքով մը հոգիներն մարմիններն քակուած
գաղթականներուն հոգին, սխրալի հրճուան-
քով մը լեցուեցաւ. ոմանք հեծկտալով գե-
տինը ինկան. ուրիշներ լսնդերու պէս խըն-
դալով թեւերնին գալարեցին. ուրիշներուն
ալ գոյնը նետեց և չիկրցան բառ մը իսկ
արտաբերել: Լիլիէն ու ես ալ մեր ուրա-
խութենէն կուլայինք: Պէտք է խոստովանիլ
որ անախակալ այդ պարագան դժհացումի մը
տեղի կուտար ներսս. տակաւին Բալիֆօր-
նիայէն հարիւր յիսուն մղոն հեռու ըլլալ կը
կարծէի և ահա հրկիզուած բացավայրին ես
տեւէն, ուղեւորութեան վախճանն էր որ
երեւան կուգար, և լեռնաշղթան երբ կար-
ծես մոգականօրէն կը մօտենային մեզի:

ծուելով ու հրաւիրելով մեզի որ սկսինք մագլցել իրենց վրայ:

Գաղարի համար որոշուած ժամանակը լրացած չէր տակաւին, բայց մեր մարդիկը ուղեցին անմիջապէս ճամբայ ելլալ: Հիւանդները իրենք իսկ վակօններուն կտաւէ դռնակներուն ետեւէն չարժեցին իրենց դեղնած ձեռքերը, աղաչելով որ ջորիները չուտով լծեն կառքերուն: Ստիպուեցայ գոհացում տալ արդէն իսկ այնքան դժնդակօրէն տառապած այդ խեղճերուն և շատ չանցած կարաւանը ճամբայ ինկաւ նորէն, այրած հողին վրայ անիւներուն հանած ճարճատիւններուն, ողաղակներու, մտրակի շալուններու և ընդհանուր ողբերգութեան մը մէջ զոր շատոնց ի վեր մոռցեր էինք:

Եւ իրաւ, ինչո՞ւ երկար բարակ դառնալ այրած երկրին շուրջը, երբ Քալիֆօրնիան ու իր ծինապատ չքնաղ լեռները կը տարածուէին մեր առջին, հազիւ տասը մղոն հեռաւորութիւնով:

Ժամերը անցան. հորիզոնը կը մօտիկնար: Արեւը խորասոյզ եղաւ մեր առջին և դիշերը կօխեց: Լուսաւորները ազօտ կերպով մը սպաղագին երկինքին երեսը. յետոյ անոնք ալ իրենց կարգին աներեւոյթ եղան. մարդիկս չուղեցին կանգ առնել. բայց լեռները ապահովաբար, նախապէս երեւցածէն աւելի հեռու էին: Կէս գիշերին մօտ ջորիները չուղեցին աւելի առաջ երթալ, ժամ մը վերջը կարաւանը ստիպուեցաւ կանգ առնել, ինչու որ անասուններուն մեծ մասը վար կ'ընար և ա'լ անկարող էր ոտքի ելլալու: Գիշերը ոչ ոք քնացաւ: Առտուան առաջին ճառագայթներուն հետ, մեր նայուածքները բնադէօրէն յառեցան, առջի օրը ընդնշմարուած ծինափայլ դադաթներուն... Ոչինչ: Սգաւոր անապատը կը տարածուէր աչքերնիս առածին չափ, միօրինակ, մռայլամած, և հորիզոնին վրայ սուր ու մրոտած գիծով մը վերջաւորուած:

Մարդիկս չիօթած մնացեր էին: «Ներկաներեւոյթ» սպառնական բառով ամէն բան կը բացատրուէր հիմա և մինչև ոսկորներու ծուծին մէջ սարսուռ մը կը վազէր: Ի՞նչը

նել: Առաջ երթալ: Հապա եթէ այդ հրկիզուած բացավայրը հարիւրաւոր մղոններով անդ կը տարածուէր: Ետ դառնալ ու շրջաւոր ընել անիծեալ այդ հողին: Ջորիներուն ուժը անկարելի էր որ բաւէր այդչափ ճամբան ետ դառնալու համար նորէն: Ձէի համարձակեր իսկ նայիլ խորը այն անդունդին որուն եզրը անշարժ կեցած մնացած էինք: Եւ սակայն որոշում մը տալ հարկ էր: Ձի հեծայ, բարձր տեղ մը ելայ և հեռադիտակով սկսայ խուզարկել շրջակայ երկիրները: Հեռուն կանանչութեան պատառ մը կը դեժադրուէր: Հոն վաղեցի և մէկ ժամ քառասորմբակ արշաւելէ ետքը, դտայ լիճ մը՝ որուն եզերքներուն վրայ, հրդեհը ամբողջովին չէր փճացուցած բուսականութիւնը: Բայց այդ լիճին ետին, սև դաշտադեպտինը հեռադիտակին հասողութենէն աւելի հեռու կը տարածուէր: Հոտ, բան մը չիկար ուրեմն ընելիք. բացորձակապէս պէտք էր ետ դառնալ և այրացաւեր երկրին շրջանը ընել:

Ետ դարձայ. բնականաբար ես վակօնները կըսպասէի դառնալ հոն՝ ուր ձգած էի զանոնք և ուր՝ հրամայած էի մարդերուս որ ինձի սպասեն: Բայց անոնք անսաստած էին ինձի, գէշ աղէկ ջորիները ոտքի հաներ ու դէպ ի արեւմուտք մեկներ էին: Իմ բոլոր կշտամբանքներուս դժնեայ չեշտով մը, սա միակ պատասխանը տուին.

— Լեռները հոն են, մենք լեռներուն կերթանք կոր:

Ոչ իսկ հակառակիլ չիօրձեցի. մարդկային որ եւ է կարողութենէ՞ դուրս էր, յուսահատութենէ՞ բռնուած այդ արարածները կեցնել: Թերեւս ես ինքս, Լիլիէնի հետ, ետ դարձած ըլլայի, բայց իմ վակօնս ալ ճանրան մնացած էր. ջորիներս մեռած էին, և կենակիցս հիմա Մօրքուր Էթթինսի հետ կը ճամբորդէր:

Գացինք ու գացինք: Գիշերը վրայ հասաւ և պարտաւորեցանք դադար առնել: Մեր վրայ, լայն տմոյն լուսնակ մը կը վառէր, մեր առջին՝ բովանդակ սեւապատ տարածութիւնը լուսաւորելով: Առտուն, կառքերուն կէսը միայն կրցաւ ճամբայ ելլալ, որովհետեւ մնացած մասը քաշող ջորիները

մեռած էին։ Այդ օրը տաքութիւնը խենթե-
նալիք բան էր։ Արեւին ճառագայթները, ա-
ծուխի խաւով մը պատած հողէն ծծուելով,
մթնոլորտը կը հրաւառէին։ Ճամբան մեր
մարդերէն մէկը սոսկալի ջղաճգութիւններով
մեռաւ. ոչ ոք ուզեց զայն թաղելու հողը
վրան առնել. իր դիակը հողին վրայ մնաց
առանց դերեզմանի։

Այն լիճին ջուրը, որուն մօտեցեր էի առ-
ջի օրը, քիչ մը զովացուց մեր մարդերը ու
անասունները, բայց նորէն ուժ տալու ան-
կարող էր։ Ջորինները երեսունըվեց ժամէ ի
վեր խոտի չիւղ մը անդամ չէին կերած. վա-
հօններուն մէջ գտնուած յարգերովը կը կե-
րակրէին զանոնք, ձգէ որ ան ալ հատնելու
վրայ էր։ Ճամբանիս հետգհետէ անոնց ու-
կորներովը կը կէտանիչուէր և շատ չանցած
մէկ հատ մը միայն մնաց անոնցմէ, զոր ըս-
տիպուեցայ բռնի կորզել Լիլիէնին յատկաց-
նելու համար։ Մեր վահօնները, մեր պաշար-
ները, և Քալիֆօրնիայի մէջ ոսկի հանելու
յատկացուած գործիքներ բոլոր անապատին
մէջը մնացած էին, կէս ճամբան... Անիծեալ
ըլլայ ան, դարերո՛վ, դարերո՛վ...

Հետեւաբար, Լիլիէնէն զատ, ամէն մարդ
սկսաւ քալել։ Եւ անա նոր թշնամի մը խո-
յացաւ վրանիս. անօթութիւնը։ Այնչափ միայն
ուտելու բան ունէինք որչափ որ ամէն Տարդ
կրցեր էր կռնակը առնել. աւերակ երկրոր
ոչինչ կրնար հայթայթել մեզ իբր մնունդ։
Դեռ հաղիւ մէկ քանի օր անցեր էր և անա
ես միակ անձն էի անոնց մէջ. որ տակաւին
ունէի քանի մը պաքցամատ ու աղած միսի
կտոր մը, զորս խնամով Լիլիէնի էի վերա-
պահած։ Աւելի պիտի ուզէի մարդիկ սպան-
նել քան թէ մէշտող հանել զայն։ Ես ինքս
ալ ոչինչ կուտէի և ստամոքսս մահացու կեր-
պով կը կսկծար։

Տառապանքնիս պակաս չի ձգելու համար
օր մը, ցորեկուան մօտ, նորէն կրկնեցեալ
առաջ եկաւ. յաւիտենական ձիւնով, ան-
առաներով ու լիճերով ծածկուած լեռներու
շարքեր ներկայացնելով մեզի։ Գիշերին սոս-
կալութիւնը խելքէ դուրս բան էր։ Հողին
մէջ ցորեկին դիզուած տաքութիւնը, խա-

ւարին մէջ դուրս կուգար, ոտքերնիս այրե-
լով ու կուրծքերնիս հեղձամղձկնելով։ Մեր
մարդերէն մէկը, մէկէն ի մէկ խելագարե-
ղաւ, գետինը նստեցաւ և սկսաւ խնդալ
ջղադրգիւ ու մահասարսուռ քրքիջով մը
որուն յիշատակը երկարօրէն հալածեց մեզի։
Այն ջորին որուն վրայ նստած էր Լիլիէն, ին-
կաւ մեռաւ. սովալլուկ կարաւանը ակնթար-
թի մը մէջ բղիկ բղիկ ըրաւ զայն։ Բայց
միսի այդ կտոր մը պաշարը ինչ կրնար ընել
երկու հարիւր հողիին։

Ջորորդ ու հինգերորդ օրերն ալ անցան։
Դաղթականներուն դէմքը, գիշակեր թռ-
չուններու դէմքին նմանութիւնը կառնէր
կամաց կամաց, և կըսկսէին ատելալառ նայ-
ուածքներ փոխանակել իրարու հետ։ Գիտէին
որ քիչ մը ուտելիք ունէի ես դեռ պահած,
բայց գիտէին նաև որ անոր մէկ փշրանքը
իսկ պահանջելը, ինքզինքը մահուան վտան-
գի մէջ դնել էր։ Գիշեր ատեն միայն ուտե-
լիք կուտայի Լիլիէնին, անոնց կատաղու-
թիւնը չի գրգռելու համար։ Դժբաղդ արա-
րածը, ամէնէն նուիրական բաներուն վրայ
երդու՛մ հանելով, կը թախանձէր ինծի որ
ես ալ իմ բաժինս ուտեմ, բայց իր առջեւ,
անմիջապէս անձնասպան ըլլալ կըսպառնայի,
եթէ յամառէր տակաւին։ Ալ խելքս վրաս
չէր կարծես։ Լիլիէն կը յաջողէր, ուտել ձե-
ւացնելով պաքցամատի կտորներ խնայել զորս
Մօրքուր էթֆինսի ու Մօրքուր կրօղվընըրի
կուտար դաղտուկէն։ Անօթութիւնը աղիք-
ներս կը գալարէր, և գլուխս կ'այրէր աղէկ
մը չի բուժուած վէրքէն։


Հինգ օրէ ի վեր, լիճին ջուրէն զատ բան
դրած չէի բերանս։ Այն մտածումը թէ հետս
ուտելիք ունէի դեռ, թէ կրնայի ուտել
զայն, տանջանք մը կը դառնար ինծի հա-
մար. կը վախճայի որ պիտի խենթեանամ և
ամէն բան լափեմ։

— Ո՛վ Տէր, ո՛ւժ տուր ինձ, փորձութեան
դիմադրելու և ինծի չի սեպակականելու հա-
մար ինչ որ կրնայ անոր կեանքը փրկել։

(Շարունակելի)

Արսօնաք Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՆՍԻԸ Օրագրի



Յ ՈՒՇԱՏԵՏՐ

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով
Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճոխ և աւելի
խնամով պատրաստուած և արդէն հրատարակուած է

Պարզ լաթակալով 3 դր. } 25 օրինակներ աւելի զնոյ-
Ընթիւ լաթակալով 5 » } ներուն գոհացուցիչ գեղջ
ՈՍԿԵԶՈՐ ՓԱՌԱԿԱԶՄ 8 »

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավանաւորներու եւ քղա-
վանաւորներու փոխ Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ,

ՊԱՅՊԼ ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԿԱՐԱՊԵՏ. ԷՖ. ԻԻԹԻԺԵԱՆԻ Թարգ-
մանած գիրքերէն հետեւեալները կը գրե-
նուին Պաղտատեան գրատունը եւ մայրա-
քաղաքիս միւս հայ գրավանաւորներուն քով.

	հասոր	դրո
Կարմիր մարդոց երդումը	2	10
Ընտանեզուրկ	2	12
Փարիզի ամուսնութիւնները	1	5
Թափառական Հրեայ	4	50
Արուարձանին տղան	3	15
Հանրակառքին ոճիւրը	1	5
Սկզբունք Բաղ. Տանեսութեան	1	4
Ընտանեկան գողտիքներ	3	15

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ Թ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ
Հեռագր. Հասցի՝ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ—ԿՐԻՍՍՈՆ
Դնում եւ վաճառում, ներածում և ար-
տածում է հաշիւ:
Բացարձակ պայման՝ ԿԱՆԽԻԼ:

Յանձնառուղիքը պիտի գնահատէ յաճա-
խորդը: Կրկնապատիկ կը տուի՝ ո՛ր եւ է
լինաս, որ արդիւնք ըլլայ գործակալութեան
անհոգութեանը: Հրապարակի մասին պահան-
ջուած ծանօթութիւնք փութով կը ղրկուին,
եթէ 1 շաբաթ փութ ներփակուի: Յայտա-
գիրը կը ղրկուի պահանջողներուն: Դիմողը
երբեք չի վնասուիր. ընդհակառակը:

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ

Թ. 20. Զաքմաքնար, Կ. Պոլիս
Ամենանոյս մերեք դպրոցական, գրական,
գիտական եւ այլ գրեանց
ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԸ ներկայ դպրոցական
չըջանի առթիւ պատիւ ունի յայտարարել իր
բազմաթիւ յաճախորդաց թէ, ունի հարկ եղած
անհրաժեշտ դիւրութիւններ՝ գրեական ամէն
յաճախարարութիւն գոհացուցիչ պայմաննե-
րով կատարելու, ըստ որում իբր գրավա-
նական մեծ հաստատութիւն մը արտադ-
րած է վերջին տասը տարիներու մէջ դըպ-
րոցական նորանոր դասագրքերու չափք մը
եւ այսպէս հիմնական բարեփոխումներ ներ-
մուծած է մեր կրթական հին մեթոտներուն
մէջ:

Ջերմապէս կը հրաւիրուին Պոլսոյ եւ գա-
ւառաց կրթական վարիչ մարմինները՝ փու-
թով յանձնարարել իրենց դասագրքերն, ի
նկատ առնելով գրատունս ընծայած առաւե-
լութիւններն եւ ամէն բացառիկ պայմաններն:



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՆ, ԿԵԱՆՔ, ՓՈՍՒԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուրազով արտօնուած.

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՆ, ՓՈՍՒԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿԱՐԿԱՄ- ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵՆԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈ- ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՒ- րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,667 Ֆրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա- 282,000,000 »
գլուխ եւ վնասուց հատուցում 54,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօմրիք խան, Բարափին վրայ:

ՍՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԵՅՔՕԶ)

ՐԵՄԱՅՐ ԱՆՈՐԺԱՀԱՄ, ԹԵԹԵՒ ՈՒ ՕԳՏԱԿԱՐ

Սոյն հանրածանօթ ազդիւրին ջուրը, ախորժահամ եւ վճիւր, յանձնարարուած է մայրաքաղաքիս ակառաւոր բժիշկներուն կողմէ, որոնք անձամբ փորձած են անոր յատ- կութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէռ Աքէոի տարրալուծած է զայն եւ Թաշտէլէնի ու Դանլըգաւաքի ջուրերէն գերազանցապէս լաւագոյն դասած է, ստուգե- լով որ անոր ջրաչափական աստիճանը 10 է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չիտար:

Տեղական հիւանդանոցներէն չատեր, իրենց բժշկապետներուն յանձնարարու- թեամբ, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի ազդիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ: չիչերը ու տակառները հոն լեցուելով ու զմուսուելով:

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐԻՆ գերընտիր ու անմրցելի ըլլալը հաստատած են նաեւ քի- միագէտ Տօքթ. Թաննիէ դաւ հետեւեալ բժիշկները.

Տօքթ. Տօքթ փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուլի, Զերրի, Սթէքուլի, Ավիլիանօ, Մալի, Միրապէլ, Բանայօթպէյ, Պալիտիս, Բարքօվաքի, Բլէմօվ, Մօրթման, Տէլլասուտա Ֆայիդ, փաշա եւ Սիմօնֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲԵՐԱ, Մեծ-Փողօց, Հալէպ խան, Թ. 7. — ՊՈԼԻՍ, Սիրքէճի, Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, ինչպէս նաեւ Շուկային Նուրի Օսմանիէի դրան կից Թ. 21 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՍՐՄԱՔԷՇ ջուրէն դաւ, Բա- րաքօվաքի ջուր: Դիւները չափ ածան են ժողովրդեան դիւրամատչելի ըլլալու համար:

Փորձի համար չիչ մը գնեցէք ՍՐՄԱՔԷՇԻ ջուրէն: եւ այնքան համով ու թեթեւ պիտի գտնէք, որ վստահաբար պիտի գործածէք զայն այսուհետեւ:

Սոյն հանրածանօթ չաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաքիսըռի եւ թէ՛ իբրեւ չաքարավաճառ, աւելի դո՛ւ ձգելու համար իր բազմաթիւ յաճախորդները: Ամրան եղանակին մէջ, համեղ պաղպղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ դիչեր:

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. չաքարագործը ճոխ միջերք մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առաջին ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ:

Միակ մասնաձիւղ, Ղալաթիա. Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101:

21-30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ջեռփի, Խոփի ու Խոփի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՏՐԻՄ

ԲԵՐԱ.

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Ղիսէին դէմ.

ԿԱՒԱԾԱ.

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈՒԼՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԱԻՒՏԱՐ

Չարլը Պօյու, Թ. 120.

Դասեր եւ նորոգութիւնք ան.

Կասաբեալ Երաւաւորութիւն:

Մասնահիւրեր զաւառաց բոլոր ֆաղաֆեռունք մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հոգեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒՔՍ ԼՈՒՐ ՏԵ ՊԱՎԻԻՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. Ընդդէմ հրդեհի (Ի ՔԱՐԹԱՃԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Շուկային ապահովագր. ԸՆԿ. (Ի ՃԵՆՈՎԱ)

68-12

Սոյն ընկերութեանց Դրամատուրնն է ի Կ. Պոլիս, Քոէի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Դաստենակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՌԵՐԱ. ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կարծա-Ալբայի Լիսին դէմ

ԳԵ. ՆԵ. ՆԵ. օրերը առաւօտեան կանու-

խէն մինչեւ իրիկուան 3. 11½

ԲԵ. ԳԵ. ՈՒՐ. օրերը ճէն մինչեւ 11½

Երակի օրերը ժամադրութեամբ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵԴՐ. ԳՐԱՏԱՆ

Զամաքնրար Բիւ 64

ԸՆԹԱՅԲ ԸՆԹԵՐՅ.—ԴՊՐՈՅԻ ԳԻՐԲԸ.

Հրատարակուեցաւ Տարր. Ընթ. Բ. տարին, ճոխ պատկերներով ու բազմազան նիւթերով հեղ. Զ. էֆ. Թրոսեանի. գին 4 դան. Դպրոցի պատ. Տնօրէնք օրինակ չը ձրի կը ստանան, 50 փարայ բօսթի ծախք ղրկելով: Ուղղակի Դրատան դիմողներուն կարելու գեղչ մը տրուի:

Վ. Թ. Յակօբեան Անդղ-Հայ Բազիրը որ սպառելու վրայ է, միմիայն յիշեալ գրա-ստանը կը գտնուի, ուր դիմելու են պէտք ունեցողները: Գին 80 դրչ:

Ամեն վնասում կանխիկ է: 7-10

Կ. Յ. ՏԵՐԵՍԿՆՃԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանան Վաճառականական պիտոյից, թաղարկան գործերու պատրաստութեան հոգը.

ԳԻՆ ԴԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մաքուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 5%ի զեղչ.

Ծանօթ Վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն մասամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Թ. ՏԵՐԵՍԿՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ ՀԱՆՐԱԳԻՏԱ-

ԿԱՆ 1904 տարւոյ.—Գ. Պաղտա սարեան սոյն ընդարձակ Օրացոյցը որ երկարամեա կանոնաւոր հրատարակութեամբ ծանօթ է, յառաջիկայ տարուան համար ի լոյս ընծայուած է ճոխ բովանդակութեամբ մը որ ամէն կարգի ընթերցողներու համար օգտակար ու շահեկան կը դարձնէ զայն: Դին 3 դրչ: Հրատարակուած է նաեւ համառօտը: Վաճառման կեդրոնատեղի Յ. Մաքսիմով Թղթով Վաճառանոցը, Կ. Պոլիս: